



Երևանի քաղաքապետարանի «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը հրավիրում է միջին և բարձր դասարանների դպրոցականներին՝ մասնակցելու «Պատանի հնագետ» դպրոցի 2019թ. դասընթացին, որը կմեկնարկի ս.թ. մայիսի 7-ից: Դասընթացը բաղկացած է տեսական և գործնական պարապմունքներից: Տեսական պարապմունքների տևողությունը 2 շաբաթ է՝ շաբաթական 3 դաս պարբերականությամբ: Գործնական պեղումները՝ 2 շաբաթ տևողությամբ, կընթանան թանգարանի տարածքում գտնվող ուսումնական պեղավայրում:

Դասընթացը ներառում է հնագետի մասնագիտության և հնագիտական պեղումների նախնական հասկացությունների ու մեթոդների վերաբերյալ գիտելիքների տրամադրում և նպատակ ունի աջակցել հնագիտությամբ հետաքրքրվող երիտասարդներին մասնագիտության ընտրության հարցում, ինչպես նաև հնագիտական գիտելիքների տարածմամբ նպաստել հնագիտական ժառանգության պահպանությանը: Դասընթացի հեղինակը հնագետ, արգելոց-թանգարանի «Կարմիր բլուր» մասնաճյուղի վարիչ, պ.գ.թ Միքայել Բաղալյանն է:

Դիմումներն ընդունվում են մինչև ս/թ մայիսի 1-ը: Դիմումի ձևաչափի լրացման և այլ մանրամասների համար կարող եք զանգահարել 43-89-53 հեռախոսահամարով («Էրեբունի» թանգարան, Հասարակայնության հետ կապերի և հանրահռչակման բաժին) կամ գրել erebunimuseum@gmail.com էլեկտրոնային հասցեին: